

Տ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՆԱՆՅԱՆ

Տ. Կոմիտաս վրդ. Հովնանյանը ծնվել է 1953 թվականին Երևանում, քահանայի ընտանիքում: Ավազանի անունն է Կիրակոս: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի № 79 դպրոցում:

1969 թ. ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան:

1975 թ. սեպտեմբերին սարկավագ է ձեռնադրվել ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի:

1977 թ. հաջողությամբ ավարտել է հոգևոր ճեմարանը՝ ավարտաճառ ներկայացնելով՝ «Մակար Եկմալյանի կյանքն ու ստեղծագործությունը» թեմայով:

1978 թ. մայիսի 14-ին Մայր տաճարում, Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ, Տ. Կոմիտաս վրդ. Հովնանյանը ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1976—1980 թթ. հետևել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի խմբավարական և դաշնամուրի դասընթացներին, միաժամանակ դասավանդելով հոգևոր ճեմարանում երաժշտագիտություն առարկան:

1980 թ. նշանակվել է ՀՍՍՀ Սիսիանի հոգևոր հովիվ:

1982—1986 թթ. ծառայել է Ռումինիայում՝ որպես Կոստանցայի հոգևոր հովիվ: